

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. սեպտեմբերի 22-ից 26-ը Նյու Յորք (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)՝ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Էրիկ Գրիգորյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Շրջակա միջավայրի նախարար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Նյու Յորք (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
2019թ. սեպտեմբերի 22-ից 26-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն՝ Կլիմայի հարցերով գագաթնաժողովին (Climate Action Summit):

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

2019թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը Նյու Յորքում հյուրընկալեց կլիմայի գործողությունների գագաթնաժողովի մասնակիցներին՝ նպատակ ունենալով խթանել հավակնությունը և արագացնել Փարիզի համաձայնագրի իրականացմանն ուղղված գործողությունները:

Մասնակից երկրները ներկայացրեցին Փարիզյան համաձայնագիրը կատարելու և գլոբալ տաքացումը 1,5 աստիճանով սահմանափակելու նպատակով գլոբալ հավակնությունները խթանելուն և մեծացնելուն ուղղված ազգային նախաձեռնությունները և ծրագրերը, որոնք համատեղելի են 1.5°C ջերմաստիճանի գլոբալ տաքացման վերջին Հատուկ զեկույցի հետ, որը ներկայացվել է Կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնաժողովի կողմից: Ինչպես նաև բարելավել երկրի ազգային սահմանված ներդրումները մինչև 2020 թվականը, նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները 45 տոկոսով և ավելի, քան հաջորդը տասնամյակում էր, և հասցնել զրոյականի մինչև 2050 թվականը:

Ս. թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանի շրջանակում կայացած կլիմայական հարցերով գագաթնաժողովի ընթացքում ներկայացվել է Հայաստանի կողմից մշակված կլիմայական ֆինանսավորման նորարական մեխանիզմը: Մեխանիզմի միջոցով համադրվում են մի կողմից երկրի արտաքին պարտքի գծով պարտավորությունները, մյուս կողմից՝ Փարիզյան

համաձայնագրի ներքո զարգացած երկրների պարտավորությունների շրջանակը: Մեխանիզմի մշակման ժամանակ առանձնացվել են երեք առաջնային ծրագրեր, որոնցից առաջինը Հայաստանի օպտիմալ անտառպատվածության ծրագիրն է:

Գազաթափողովի ընթացքում զարգացած և զարգացող երկրների և մի շարք միջազգային խոշոր կազմակերպությունների ղեկավարների կողմից ներկայացվել է ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ից և Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների կատարման նպատակով երկրների ազգային և ոլորտային զարգացման քաղաքականություններում կլիմայի փոփոխության խնդիրների ընդգրկման կարևորությանը: Վերը նշված ղեկավարների մի խումբ ներկայացրել են նաև իրենց երկրների կամ կազմակերպությունների կողմից մշակվող և իրականացվող կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանը և հարմարվողականությանն ուղղված հավակնոտ գործողությունները՝ հաշվի առնելով Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագետների խմբի կողմից հրապարակած վերջին «Հատուկ զեկույցում» ներկայացրած արդյունքները:

ՄԱԿ-ի կլիմայական հարցերով գազաթափողովի շրջանակներում տեղի ունեցող հանդիպումներում ներկայացվել և քննարկվել են զարգացած և զարգացող երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից ձևավորված ինը կլիմայական կոալիցիաների ուղղվածությունները և այդ կոալիցիաների շրջանակներում մշակված նախաձեռնությունները:

2019թ. սեպտեմբերի 24-ից 26-ը, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանի շրջանակում ներկայացվել են ազգային հայտարարություններ մասնակից պատվիրակությունների ղեկավարների կողմից, իսկ սեպտեմբերի 24-ից 25-ը, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանի շրջանակում կայացած ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակների» միջոցառումներում ներկայացվել են մասնակից երկրների տեսլականները և օրակարգերն ուղղված «Կայուն զարգացման նպատակներին»:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

2019թ. սեպտեմբերի 22-ին հանդիպում է տեղի ունեցել Իռլանդիայի պատվիրակության հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է շրջակա միջավայրի ոլորտում Իռլանդիայի և Հայաստանի համագործակցության շրջանակները, մասնավորապես անտառային, կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության պահպանության, բնական ռեսուրսների բանական օգտագործման ուղղություններով:

Շրջակա միջավայրի նախարար

X
